№ 67 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 16 **1892** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 16 № 67

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ԱՂԵՏ և մահմետականութիւն.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Բաթումից· Նամակ Բագուից· Նամակ Ներքին-Ախտայից· Նամակ Խմբագրին· Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Պարսկաստանից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ· —ԲՕՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Նամակ Շվէյցարիայից·

ԲՆՈՒԹԵԱՆ ԱՂԵՏ ԵՒ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

Այն, ինչ որ մենք ասել ենք միշտ մահմետականութեան մասին, գլխաւորապէս երևան է գալիս բնութեան աղետների ժամանակ: Մահմետականութիւնն իր ֆատալիզմի պատճառով սպանում է մարդու մէջ ինքնագործունէութեան ամեն տեսակ եռանդ. մահմետականութիւնն ասում է մարդուն. „ինչ էլ անես, ճակատագրիցդ փախչել չես կարող“: Եւ ահա Ղուրանը դաւանող մարդը մտածում է.

„Ի՞նչ օգուտ որ ես գործեմ, ջանամ բարւոքել կեանքս, ինքնագործունէութեամբ լաւացնեմ վիճակս, առաջադիմեմ, բնութեան այս կամ այն կործանիչ ոյժերի դէմ մաքառեմ, քանի որ այն ինչ որ պէտք է լինի,—կը լինի...“

Մահմետականին ասում են. „մաքրութիւն պահպանիր, եթէ ոչ քեզ շրջապատող անմաքրութիւնը կը զարգացնէ քո շրջանում այլ և այլ վարակիչ հիւանդութիւններ...“ Իսկ մահմետականը պատասխանում է. „եթէ Աստուծուն հաճելի չէ որ ես մեռնեմ, ինչքան էլ անմաքուր պահեմ իմ տունս,—ոչ մի վարակիչ հիւանդութիւն չի դիպչի ինձ. իսկ եթէ վիճակված է ինձ մեռնել,—ինչքան էլ աշխատեմ մաքառել աննպաստ հանգամանքների դէմ՝ դարձեալ կը մեռնեմ...“

Այդ տեսակ սպանիչ, մարդուս ինքնագործունէութիւնը ոչնչացնող կրօնական փիլիսոփայութիւնը՝ հիմք է մշտական անշարժութեան, արդեօք է կեանքի ամեն տեսակ բարւոքման, թշնամի է ամեն տեսակ առաջադիմութեան...

Մահմետականութեան այդ տեսակ սպանիչ հայեացքի հիման վրա մարդս անզօր է որ և է գործ կատարել, որ և է բարւոքում մտցնել իր կեանքի մէջ, անզօր է առաջադիմել... Զարմանալի չէ, ուրեմն, որ Ղուրանը դաւանող ասիական ազգերը դարերի ընթացքում դատապարտված են անշարժութեանն ու մեռելութեան:

Երբ որ խօլէրայի պէս մի վարակիչ հիւանդութիւն յայտնվում է Պարիզում, կամ Լօնդօնում, մի խօսքով քաղաքակիրթ և բարեկարգ քաղաքում,—քաղաքի բարեկարգ դրութիւնը, նրա սանիտարական աջող պայմանները՝ արդեօք են լինում քաղաքի ազգաբնակութեան մէջ էպիդեմիայի տարածման: Քրիստոնէութիւնը, որը դարձրել է մարդուն գիտակցաբար գործող արարած, իր անձնական պատասխանատուութեամբ գործող անհատ,—ծնեցրել է նրա մէջ ինքնագործունէութեան փրկարար սկզբունքը: Այդ տեսակ վարդապետութիւն չէր կարող չը ծնեցնել մարդկային գիտակցական, միշտ առաջադիմական քաղաքակրթութիւն:

Ընդհակառակն մահմետականութիւնը կաշկանդել է մարդկային բոլոր ինքնուրոյն ոյժերը, սպանել է նրա մէջ որ և է բանում ինիցիատիվ, նախաձեռնութիւն, ոչնչացրել է մարդու մէջ գիտակցական ձգտումներ, ինքնաճանաչութիւն, ուրեմն և արդեօք է դրել նրա ինքնագործունէութեան զարգանալուն:

Քրիստոնէութիւնը դարձրել է մարդուն իր բոլոր արարածների համար պատասխանատու էակ, դարձրել է նրան ինքնուրոյն անհատ:

Մահմետականութիւնն, ընդհակառակն, ստորացրել է մարդուն չէզոք արարածի աստիճանին, անխուսափելի ճակատագրի սպանիչ թէօրիայի շնորհով՝ խլել է մարդուց ինքնուրոյնութեան, ինքնագործունէութեան, անձնական պատասխանատուութեան բոլոր յատկութիւնները...

Մինչդեռ քրիստոնեան ուսում է առնում, ձգտում է դէպի առաջ, ջանում է անընդհատաբար հարստացնել իր մտաւոր պաշարը նոր և նոր հմտութիւններով, աշխատում է նոր դիւտեր անել, բարւոքել իր վիճակը, կատարելագործել իր կեանքը, միշտ առաջադիմել,—մահմետականն ասում է. „ի՞նչ հարկաւոր է ուսումը, քանի որ իմ մարդկային ուսումով ես չեմ կարող մաքառել Աստուծու կամքի դէմ, ի՞նչ հարկաւոր է բարւոքել վիճակս, քանի որ ճակատագրիս ձեռքով առաջուց նշանակված է իմ մահվան րօպէն...“

Մինչդեռ քրիստոնէական քաղաքակրթութեան զաւակը գործում է,—Մահմետի որդին միմիայն նամազ է անում...

Նրա կարծիքով անշարժ, անգործ մնալ՝ կը նշանակէ հպատակվել Աստուծու կամքին, չը դրգռել Ստեղծողի զայրոյթը, հնազանդ լինել աստուածային նախախնամութեան:

Մահմետականին ասում էք. „գնա՛ դըպրոց, ուսում առ“. նա ծաղրում է ձեզ և պատասխանում է. „ի՞նչ հարկաւոր է ուսումը, քանի որ մեր ուսումովն էլ մենք անզօր ենք մաքառել Աստուծու կամքի դէմ:“ Մահմետականին ասում էք. „Մաքրիր տունդ, բակդ, եթէ ոչ խօլէրայի կամ ժանտախտի նման հիւանդութեան երևալուն պէս, հիւանդութեան սաղմերը քո տանը աւելի նպաստաւոր հող կը գտնեն զարգանալու, քան մաքրասէր եւրոպացու շրջանում...“ Իսկ մահմետականն իր սովորական սպանիչ անտարբերութեամբ պատասխանում է ձեզ. „ի՞նչ հարկաւոր է այդքան ջանք գործ դնել, զուր տեղ չարչարվել, քանի որ մարդս անզօր է մաքառել նախօրօք իր համար նշանակված վիճակի դէմ...“ Եւ իր անտարբերութեան, կեղտի, տգիտութեան մէջ՝ շարունակում է իր նամազն անել...

Եւ այդ է պատճառը, որ սպանիչ չէզոքութեանն ու անտարբերութեան հասցրած, ինքնագործունէութեան փրկարար սկզբունքից զուրկ մարդկային այն մասը, որը դաւանում է մահմետական կրօնը՝ միշտ անշարժ է մնում, երբէք ընդունակ չէ լինում համամարդկային առաջադիմութեանը յարվելու:

Այդ է պատճառը, որ դեռ երկար ժամանակ մահմետական կրօնը դաւանող ասիական երկիրները կը հանդիսանան որպէս անսպառելի աղբիւրներ ամեն տեսակ կործանիչ ոյժերի: Դեռ երկար ժամանակ նրանք, այդ երկիրները, կը լինեն՝ տգիտութեան և խաւարի, խօլէրայի և ժանտախտի ամենահաստատ տարածողներ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Յունիսի 11-ին

Անցեալ շաբաթ դերասանուհի տիկին Սիրանոյշ Բաթումում երեք ներկայացում տուեց «Քոյր Թէրեզա», «Զաւակ» և «Ռուզան»: Առաջին ներկայացումները բաւական աջող անցան. սակայն մուտքը հազիւ կարող էր ծախսը ծածկել: Երրորդ ներկայացման ժամանակ թատրոնը լի էր: Խաղում էին «Ռուզան»: Այդ պիէսան երբէք Բաթումի բեմի վրա դրված չէր, ուստի շատերը մեծ հետաքրքրութեամբ եկել էին թատրոն:

Խաղը վերջանալիս հասարակութիւնը հիացած մնաց պիէսայի անբովանդակութիւնից. աւելացրէք դրա վրա և այն, որ սիրողների մեծ մասը իրանց դերերը չը գիտէին. Զալալի դեր կատարողը Թաւրիզի բազարում պտտող մի դեվրիշի էր նմանում.... և դուք գաղափար կունենաք թէ որքան սառը կերպով անցաւ ներկայացումը այդ երեկոյ: Եթէ Սիրանուշի խաղը չը լինէր, ես հաւատացած եմ, որ հասարակութիւնը նոյն իսկ մինչև վերջը չէր սպասի: Պիէսայի խայտառակ բովանդակութիւնը երևի աչքի առաջ ունենալով, տիկին Սիրանուշ խաղի վերջում իր կողմից մի նախադասութիւն աւելացրեց, որով յայտնում է, որ իրան չը պէտք է յանձնէ թաթար իշխանին, այլ պիտի թունաւորէ. լաւ կարկատան է...

Ծիծաղելի է, որ մեծ մեծ խօսող Ատրներսեհը, բերանը բաց արած թողնում է, որ իր նշանածը գնայ թաթարի գերին ընկնի, և գնալուց յետոյ նրան ճանապարհից յետ բերելու համար ուղարկում է ծառային և նաժիշտին.... ածիերիմ իշխաններ....

Մի տեսակ տխուր տպաւորութիւն է գործում այժմ մարդու վրա Բաթումի ծովափը. ձմեռվայ կենդանութիւնից և շարժումից յետոյ, երբ շրջեանաերին շատ անգամ ափի մօտ կանգնելու տեղ չէր լինում, այժմ շաբաթներով հազիւ մի երկու շրջնաւ է երևում: Նաւթային գործը իր ամենաբնկած վիճակի մէջ է, քան երբ և իցէ կարող էր լինել. գործարանները արձակել են շատ բանւորներ, պակասացրել են համարեա կիսով չափ իրանց արդիւնաբերութիւնը:

Քաղաքը վճռել է ծախսել 12 հազար ռուբլի, խօլէրայի մօտաւորութեան պատճառով զանազան միջոցների ձեռնարկելու համար: Պէտք է ասած որ Բաթումում աղքատութեան կէսից աւելին մշակ դասակարգը լինելով, և ապրուստի ու տեղի թանգութեան պատճառով ապրելով ստորերկրեայ կեղտոտ տեղերում, մեծ ջանք է հարկաւոր քաղաքում խօլէրա յայտնվելիս մաքրութիւն պահպանել:

Տեղական հայերից մի պօլկօշնիկ, Մ. Տէր-Աստուրով, որը մի ժամանակ ծանօթ էր դանիական թագաւորական զոյգին, նորերումս ուղղակի թագաւորի և թագուհու ստորագրութեամբ հետեւեալ հեռագիրը ստացաւ: «Անկեղծ շնորհակալ ենք ձեր բարութեան և լաւ յիշողութեան համար. Քրիստիան, Լուիզա»: Պօլկօշնիկ Տէր-Աստուրով հեռագրով շնորհաւորել էր նրանց յօբելեանը:

Աբ. Ապ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՄԻՑ

—

Յունիսի 11-ին

Հազիւ հաղ սկսել են քաղաքի վրա ուշք դարձնել. երկրորդ օրն է, որ նաւթ են ածում փողոցներում, այլ օպերեաներ և դա կարելի է դիտել նրանից, որ օպերայի ժամանակ թատրոնը դատարկ է լինում, մինչդեռ մի ամենայիմար օպերէտի ժամանակ տոմսակ անգամ չէ կարելի գտնել: Պատահում է որ մի օպերէտ կրկնվում է մինչև 10 անգամ, ինչպէս պատահեց մի նոր գրված «Միս Հէլիէտ» անունով օպերէտի հետ: Այդ օպերէտը նոր է գրված և ժամանակակից կեանքից՝ Պիրենեան լեռների այցելողների կեանքից. օպերէտի մէջ կան շատ ծիծաղաշարժ տիպեր քուէյքր միսիոներ, հօր ձեռքի տակ մեծացած կրօնամոլ և ճեասէր աղջկայ, ամերիկացի երիտասարդի և այլն. առհասարակ օպերէտի թէ նիւթը և թէ մուղիկան շատ լաւ են:

Այդ օպերէտից յետոյ թատրոնական վարչութիւնը սկսեց տալ «Voyage de Suzette» անունով մի օպերէտ—ֆէերի, որը մինչև այժմ 5—6 անգամ կրկնվել է և դեռ կրկնվում է: Ահա՝ ամենայիմար պիէսաներից մէկը, որն արժանի է աւելի ցիրկի մէջ ներկայացվելու, քան թատրոնի: Երևակայեցէք ձեզ մի այլանդակ խառնուրդ արևելեան և եւրոպական կեանքի, հագուստների և սովորութիւնների: Օրինակ, Սպահանում կանայք կիսամերկ՝ մարդկանց հետ նստած ճաշում են, երգում և վերջ ի վերջոյ պարում էլ են: Ամէնքում, մի հին յոյն աղնուականի տան մէջ դիմակահանդէս է լինում և յոյն ծերունի աղնուականը իր ծիծաղելի հագուստով թև է տալիս Սիւզէտին եւրոպական «կոտրտուքով», հրաւիրում է նրան և նրա հետ «կադրիլ» պարում... յետոյ բեմի վրա են գալիս անճոռնի կերպով չինված ուղտեր, փղեր, ընձուղտներ, կրկէսային ալիւրոտ խեղկատակներ ամեն տեսակ խայտառակ շարժումներով և այլն, բոլորը 11 երկար պատկերներ, որոնք մեզ յօրանջել կը տան, մինչդեռ ժընէվացիներին գրգռվեցնում են: Մինչև իսկ չը կայ ֆէերական չքեղութիւնը և դեկօրացիայի գեղեցկութիւնը. մարդու քունն է տանում և ակամայ յիշում է 1890 թ. Թիֆլիսում Ֆօրկատիի տուած չքեղ ֆէերիաները:

Եւ ինչ էք կարծում. ամեն անգամ, երբ ներկայացնում են այդ պիէսան, թատրոնում ասեղ գցելու տեղ չէ լինում. իրաւ էր ասում անցեալ օր մի բարեկամ, որ Ժընէվի թատրոնում կրկնվող օպերէտները, որոնք «grand succès» ունեն և գահլա տանելու չափ կրկնվում են, պիտի խմանալ, որ մեծ մասամբ ամենայիմար պիէսաներ են լինում:

Օպերաներ քիչ են խաղում, իսկ դրամաներ երբէք. քանի որ այստեղ եմ եկել, մի անգամ իսկ չեն ներկայացրել մի կօմեդիա կամ դրամա... մի «թիւ» պատարագ:

Այս սեզօնում թատրոնում կայ բան, որ ամենից հետաքրքրականն է, այդ է այն կօնցերտների խումբը, որ սկսվել է նոյեմբերից և այժմ 10—15 օր միանգամ մէկը տրվում է: Այդ կօնցերտները տալիս են 60 հոգուց բաղկացած մի օրկեստր աղիքաւոր և շնչով *) գործիքներով, նաև նշանաւոր սօլիստ արտիստներ, ինչպէս են վիօլօնչելիստ Հիւգօ Բէկկէր, վիօլօնիստ Խայի, և այլն: Ամենափառաւոր կօնցերտը անցեալ դեկտեմբերի 5-ի տուածն էր, Մօցարտի հարիւրամեկի առիթով: Պրօգրամը կազմված էր Մօցարտի նշանաւոր գրուածքներից և օրկեստրին մասնակցում էր կոնսերվատօրիայի 100-ից աւելի երգիչներից և երգչուհիներից կազմված խումբը, որը մեծ աջողութեամբ կատարեց Մօցարտի հրաշալի Requiem և Idomené օպերայի մարշը:

Յունվարի 9-ին էլ Հիւգօ Բէկկէր վիօլօնչելիստը տուեց իր կօնցերտը օրկեստրի մասնակցութեամբ. պէտք էր լսել այդ արտիստի կատարած հրէական

*) Струнная и духовая.

բում և բնակիչներին դէպի մաքրութիւն հրաւիրում պատերին կպցրած յայտարարութիւններով. սակայն հսկողութիւնը, կօնտրօլը դարձեալ բացակայում է. ասում, հրամայում, կարգադրում են, բայց չեն հետևում անմիջապէս իրագործելուն. չօշափելի բարեփոխութիւն քաղաքիս սանիտարական դրութեան վերաբերեալ չէ նշմարվում թէև ամենակերպ հրահանգներ տեղի են ունենում: Հիւանդութեան նախասարսափը վաղուց արդէն տրամադրել է հասարակութեան կասկածոտ լինելու. ամեն մի սովորական փորացաւ կամ փորհարութիւն ահագին իրարանցման պատճառ է դառնում: Ամեն տարի այս ժամանակ, երբ շոքը սաստկանում, կեանքն անտանելի է դառնում— միշտ երևան են գալիս զանազան հիւանդութիւններ—և պէտք է ասած, որ առատ հոնձ են առնում միշտ. տարբերութիւնը նրանումն է, որ խոլէրայի սարսափը աւելի շատ զոհեր է անել տալիս. հէնց որ փորը լուծել է սկսում կամ փսխել, իսկոյն խոլէրա կարծելով, կարճ միջոցում ահից մեռնում են հիւանդները. այսպիսիների թիւը քիչ չէ: Սև քաղաքում, Բալախանի և այս տեղ՝ քաղաքումս իսկական խոլէրայի նշաններ ունեցող դէպքեր էլ են տեղի ունենում, բայց շատ սակաւ: Մահվան մի քանի դէպքեր եղել են փորացաւութիւնից և փսխելուց. եղել են և յանկարծակի վախճանվողներ. մի քանի դէպքեր էլ եղել են այնպէս, որ յանկարծ սկսել է փորացաւ, ապա ցնցումներ և կծկվելու, կուչ գալու նշաններ. այսպիսիներին եթէ չուտով օգնութիւն են հասցնում, մաժում են, յետ են բերում. այսպիսիներից կան և առողջացողներ և մեռնողներ: Իսկապէս մի ինչ որ հիւանդութիւն, էպիդէմիա կայ, որը օրական 10—15 հոգի զոհեր է տանում. այս հիւանդութիւնը, տարաբաղդաբար, դեռ չէ պարզաբանված և որոշված պաշտօնապէս:

Մեռնողները գլխաւորապէս պատկանում են հասարակ—բանւոր դասակարգին. այս իրողութիւնը հարկադրել է տեղիս բանւոր և արհեստաւոր դասակարգերից շատերին թողնել գործը և հեռանալ հայրենիք. Բալախանիի և Սև քաղաքի բանւոր մշակների համարեա կէս մասը հեռացել է և շատերն էլ շարունակ հեռանում են: Հեռացել են և հեռանում են նաև միւս դասակարգերից. քաղաքը համարեա դատարկվել է. մեկնողներում և վագօններում ասեղ գցելու տեղ չէ լինում՝ այնքան մեծ է լինում բաղմութիւնը. և այս նոր չէ, երրորդ շաբաթն է, որ այսպէս է. իսկ այս վերջին օրերս բոլորովին չափից դուրս է. այն տեղն է հասնում, որ բաղմաթիւ մարդիկ ստիպված են լինում երկաթուղու կայարանից յետ գալ՝ տոմսակ և տեղ չը գտնելու պատճառով: Անցեալ երեկոյեան թէև 22 վագօն էին միացրել, այնու ամենայնիւ, 10—15 ընտանիք տուն վերադարձան. վագօններում տեղ չը կար նոյն իսկ կանգնելու համար. մի երեխայ ուշաթափվեց տօթից վագօնի մէջ. իսկ աղմուկի, անկարգութեան, ծեծի և հայհոյանքի վերջ է դնվում այն ժամանակ միայն, երբ գնացքը շարժվում է:

Վերջին օրերս բացի այդ փորցաւութիւնից և փսխելուց, տեղի են ունենում և այսպիսի դէպքեր. փողոցում անցնելիս վայր են ընկնում ուշաթափ. այսպիսիներին, եթէ տէրը ձեռնհաս չէ լինում վերցնելու, իսկոյն հիւանդանոց են ուղարկում: Դեռ վատ հետևանքներ չեն ունեցել այդպիսի դէպքերը. մի ժամ կամ ժամ ու կէսից յետոյ՝ բոլորովին ուշքի են գալիս և կաղդուրվում:

Ն. Դ.

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՑԻՑ

—

Յունիսի 10-ին

Այս գիւղի մալական հասարակութիւնը, որքան որ բաղմակողմանի հմտութիւններ ունի տնտեսական կեանքի այլ և այլ հանգամանքներում և որքան որ ընդունակութիւն է ցոյց տալիս յարմարվելու ժամանակակից կեանքի աւելի թեթև պահանջներին, այնքան անընդունակ է ուսումնական կամ ուսման—կրթութեան գործում: Կանոնաւոր գրագիտութիւնը, մտաւոր զարգացումը և դպրութիւնը մի մութ պատկեր է ներկայացնում այդ ժողովրդի համար: Այդ երևում է գոնէ նրանից, որ ուսանողական և գրական ասպարէզը, թէ անցեալ պատմական և թէ ներկայ կեանքում, այդ ժողովրդից ոչ մի անձնաւորութիւն ոտք չէ կոխել: Այդ մասին նոյն հասարակութիւնը ոչինչ գաղափար չունի, այլ նրա արհեստը և սովորութիւնն է միմիայն կրօնի ու դաւանանքի վերաբերմամբ միմեանց հետ վիճել հրապարակներում և այդ կարծէք մի առանձնաշնորհումն է, որ վայելում է մալական հասարակութիւնը: Այդ ժողովուրդը գրագէտ լինելու համար բաւականանում է կամ այս և այն մասնաւոր մարդու մօտ մի քանի ամիս իր երեխան կարդացնել տալով և կամ անային կրթութեամբ, որի հետևանքն է լինում այն, որ սովորող մանուկը կարողանում է միայն այբուբենը անախորժ հնչիւններով արտասանել (ази, буки, веди, փոխանակ՝ а, б, в. և այլն) և տառերը ամենաանճոռնի կերպով գրել... Ի վերջոյ մալական հասարակութիւնը բաւականանում է լոկ գրել-կարդալով, կամ աւելի լաւ է ասել՝ իր անունն ու ազգանունը գրելով միայն: Ընթերցանութիւնը, ժողովրդական նորանոր գրքերի տարածութիւնը նոյնպէս անսովոր բաներ են մալական ժողովրդի համար. նրա ընթերցանութեան չափը, որ տեղի է ունենում ծերերի շրջանում, սահմանափակված է քանի մի կրօնական գրքեր և Աստուածաշունչ կարդալով միայն: Այդ տեսակէտից՝ շատ հեշտ է եզրակացնել, որ ուսման—կրթութեան գործը կաղկաղ է ընթանում մալական հասարակութեան և ամբոխի շրջաններում, որոնցից ոչ մի անդամ տեղ չէ բռնում ընդհանուր ուսանողական ցանկի մէջ...

Անցեալները լսեցինք՝ թէ կառավարութիւնը առաջարկութիւն է արել այստեղի մալական հասարակութեան՝ միանալով իր հարևան գիւղերի (որոնք են, Սուխոյ-ֆօնտան և Կօնստանտինօվկա) բնակիչների հետ՝ մի տարրական ուսաց դպրոց հիմնեն այստեղ, Ներքին-Ախտայում: Այդ պատճառով մի քանի օր առաջ այստեղի մալական հասարակութիւնը մտադիր էր մի ընդհանուր գիւղաժողով կայացնել՝ ուսումնարանի հիմնարկութեան առիթով խորհրդածութիւններ անելու համար: Սակայն մինչև այսօր դեռ ևս ոչինչ ժողով չէ գումարվել: Բայց թէ ինչ կերպ կը վերաբերվի մալական հասարակութիւնը այդ համակրելի գործին,—առ այժմ ոչինչ չենք կարող ասել:

Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բաթում, յունիսի 12-ին

Ապրիլի 30-ին Կ. Պոլսից, «Հայրենիք» լրագրի տնօրէն պ. Շահնազարից, հետևեալ հեռագիրը ստացայ. «Հայրենիքը» բացված է. շտապեցէք էջմիածին, որպէս մեր թղթակից ներկայ լինել ընտրութիւններին»: Նոյն օրը ես մի և նոյն խմբագրութեան կարգադրութեամբ ճանապարհածախս ստանալով գնացի էջմիածին, ուր ներկայացայ սրբազան Ցեղակալին որպէս այդ լրագրի թղթակից, աւելացնելով որ այդ լրագիրը սկսել է հրատարակվել:

Վերադարձիս մեծ զարմանքով տեղեկացայ Կ. Պոլսից, որ «Հայրենիք» վերջին դադարումից յետոյ այլ ևս բացված չէ, և ինձ ուղարկված հեռագիրը հիմնված է եղել այն բանի վրա, որ ապրիլի 30-ին «Հայրենիք» լրագրի բացման հրամանագիրը տուել են, բայց մի քանի բարեմիտ հայերի ջանքով միւս օրը կրկին յետ են առել:

Իմ վարմունքը, ներկայանալ սրբազան Ցեղակալին և շատ ուրիշներին, որպէս թղթակից մի բոլորովին գոյութիւն չունեցող լրագրի և մուտք ունենալ այն տեղերը, ուր միայն թղթակիցները մտնում են, կարող էր շատերի համար տարօրինակ լինել, մանաւանդ որ պատահածի մասին կարող էին տեղեկութիւն չունենալ: Ուստի թոյլ տուեցէք, այս երկու տողով արդարանալ այն սխալ կարծիքների առաջ, որոնք իմ վերաբերութեամբ շատերը կարող են կազմած լինել:

Աբէլ Ապրէսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Բացված է «Մշակի» կէս տարվայ բաժանորդագրութիւնը: Վեց ամսով ներկայ թվի (յուլիսից մինչև յունվար ամիսը 1893 թվի) բաժանորդագրվողները պէտք է վճարեն 6 ռուբլի:

—

ՂԶԼԱՐԻՑ ստացանք հետևեալ հեռագիրը. «Այսօր, յունիսի 14-ին, Ղզլարի քաղաքացիք տոնում են իրանց համաքաղաքացիների, Իզմիրեան եղբայրների առևտրի հարիւրամեակը: Դա առաջին օրինակն է այդ տեսակ ոգեսիրութեան: Տօնին մասնակցողների մէջ ոգևորութիւն է տիրում:» Հեռագիրը ստորագրել է Ղզլարի քաղաքագլուխ Սերեբրակեան:

—

Հաղորդում ենք բժիշկների հասցէները, որոնք նշանակված են Թիֆլիսի սանիտարական խմբերում, և որոնց մեր քաղաքի աղքատ դասակարգը կարող է դիմել, խոլէրայով հիւանդանալու դէպքում: Բժիշկ Աղամալեան կենում է Գօլովինսկի պրօսպէկտում, տուն № 44, բժիշկ Յէնսներ՝ Միխայլովսկայա փողոցում, տ. № 19, բժիշկ Արծրունի՝ Գօլովինսկի պրօսպէկտում, տ. Միրզոեվի, № 5, բժիշկ Սարգսեանց՝ Կաթոլիկական փողոցում, տ. Միրզոյեանցի, № 8, բժիշկ Գեղալին՝ Սերեբրիանիի բլրակում, տ. Պօպօրովի, № 42, բժիշկ Տէր-Աստուրով՝ Դվօրցովայա փողոցում «Սակսոնիա» կահաւորված սենեակներում, բժիշկ Թարխանով՝ Ելիսավէտինսկայա փողոցում, տ. № 70, բժիշկ Պրէօբրաժէնսկի՝ Միխայլովսկայա փողոցում, տ. Պօպովի, № 92, բժիշկ Բէխտեմէր՝ Ելիսավէտինսկայա փողոցում, տ. Ալէքսովի, № 86, բժիշկ Ֆօն-Իրտէլ, Ապտէչնի անցքում (պէրէուլօկ) սեփական տանը, № 1.

—

Յունվարի 6-ի աղետից վնասվածների օգտին ստացանք Մայկօպից, Նիկողայոս Մալեանցի միջնորդութեամբ 6 հատ տոմսակ երկրորդ բարեգործական վիճակախաղութեան և նոյն վիճակախաղութեան 2 կուպօն, ընդամենը 32 կուպօն (32 ռուբլու): Այդ կուպօնները գնելու համար փողերը հաւաքվել են ուղարկող պարոնի ձեռքով Մայկօպի մի խումբ երիտասարդներից: Այդ բոլոր տոմսակներն ու կուպօնները յանձնեցինք արդէն Թիֆլիսի քաղաքագլխին:

—

Յօգուտ Պատկանեանի ուղարկած գումարների թւում կար 24 ռուբլի, որ ժողովել էին Գետաբէկում նուիրատուները և ուղարկել էին մեզ դեռ ապրիլ ամսին: Այդ գումարի մասին լուրը (ուրիշ քաղաքներից ուղարկած գումարների հետ) տպվեց «Մշակի» № 44-ի մէջ: Այժմ մենք անդադար նամակներ ենք ստանում Գետաբէկից թէ այդ 24 ռուբլի յիշված չէր «Մշակի» մէջ: Թող կարդան ապրիլի 21-ին հրատարակված «Մշակի» 44-որդ համարը: Իրաւ է մենք նուիրատուների անունները չը տպագրեցինք, որովհետև շատ տեղ էին բռնում և անուններից շատերն էլ շատ անորոշ էին գրված, բայց յիշելով Պատկանեանի օգտին ստացված փողերը այլ և այլ քաղաքներից, ընդարձակ լուրի վերջն աւելացրինք. «Վերջապէս Գետաբէկից, այդտեղի քահանայի տանը հաւաքված հիւրերը իրար մէջ ժողովելով 24 ռուբլի ուղարկել են մեզ այդ գումարը նոյն նպատակով:» Զարմանալի մարդիկ են. իրանք ուշադրութեամբ չեն կարդում լրագիրը և յետոյ գանգատվում են թէ լուրը չէ տպված և խմբագրատանը ստացված փողը չէ յիշված լրագրի մէջ:

—

ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՑԻՑ մեզ գրում են. «Վերջերս այստեղ սաստիկ չորութիւն է անում. ցանքերը առանց անձրևի՝ չորանում են. գիւղացիք յուսահատված են և մտածում են արդէն իրանց ապագայ թշուառ վիճակի մասին: Սակայն հացահատիկները այնքան էլ թանգ չեն. ցորենի պուդն արժէ 60—65 կոպէկ, գարին՝ 35 կոպէկ, այսինքն գները նոյն են, ինչ որ էին եօթ, ութ ամիս սրանից առաջ, անցեալ կալածեղի մէջոցին:»

—

Այժմ շատերը սկսում են այն կարծիքը յայտնել, որ ԲԱԳՈՒԻ մէջ երևեցած խոլէրան ոչ թէ ուրիշ տեղից է բերված, այլ ծագել է նոյն իսկ Բագուի մէջ:

—

Յօգուտ Բաֆ. Պատկանեանի ստացանք Բագուից, մի խումբ նուիրատուներից 5 ռուբլի, Սուրամից, Կ. Ծովհաննեանից 10 ռ.: Նախկին 1454 ռուբլի 90 կոպ. գումարի հետ ունենք այժմ 1469 ռուբլի 90 կոպէկ:

—

«Kol-Nidrei» մելոդիան և Popper-ի Tarantelle-ը և գաղափար կազմել թէ ինչ նշանաւոր արտիստներ են, որ ծընէվի թատրօնում կօնցերտներ են տալիս:

Այս ձմեռը կունենանք մի շարք այդպիսի կօնցերտներ:

—

Բացի կօնցերտներից, եթէ կամենաք ամեն երեկոյ մտաւոր զուարճութիւն վայելել կարող էք զանազան տեղերում, զանազան հետաքրքիր խնդիրների վրա եղած դասախօսութիւնները լսելու գնալ. բոլորի մուտքը ձրի է, սկսած համալսարանի «Aula» կոչվող դահլիճի դասախօսութիւններից մինչև սրճարանների սրահներում եղած կօնֆերանսները և բէգէլատները: Դեռ նոր սկսվեց մի շարք ամենահետաքրքիր դասախօսութիւններ համալսարանի դահլիճում աշխարհագրական, պատմական և այլ նիւթերի վրա, օր. աշխարհագրութիւն նորագոյն հարցերի, ներկայ նոր գերմանական պատմագիրների, զանազան յայտնի գիտունների և գործողների մասին:

Լրագիրների մէջ մի որոշ սիւնակ կայ, որը որոշված է այդ դասախօսութիւնների յայտարարութիւնները տպագրելու համար. ոչ մի օր լրագրի այդ տեղում 5—6 յայտարարութիւններից պակաս չէք գտնի. բոլոր դասախօսութիւնները սկսվում են երեկոյեան ժամը 8-ին և 2 ժամից աւելի չեն տևում:

Հսկայական, ահագին մտաւորական հոսանք է, որի մէջ ընկնում է մարդ. այնքան բան կայ լսելու, այնքան սովորելու, որ մարդ չուարում է թէ որից սկսի. որքան աշխատում է, որքան լսում է, դեռ գոհ չէ լինում, դեռ կարծում է որ ծոյլ է, որ ոչինչ չէ լսել, իր շուրջը պատում է այդ հոսանքը և մարդ, եթէ կամենայ, մի բօպէ իսկ չի գտնի «ձանձրութիւն» կոչվող ախտի համար: Ահա համալսարանը, որ բաց է ամենքի առջև, յետոյ՝ դասախօսութիւնները, ձրի ընթերցարանները, ուր ամեն գիրք, ամեն լրագիր կարող էք կարդալ, տուն տանել. մէկ տեղ չէ, երկու տեղ չէ, ամեն թաղ իր ընթերցարանն ունի բաւական չէ, Շվէյցարիայի մէջ վխտացող ամեն ընկերութիւն ևս իրը ունի, որոնց դռները բաց են ամենքի առջև օրվայ ամեն ժամում: Բացի գրադարաններից, ահա և մուզէներ և թանգարանները, որոնց մուտքը նոյնպէս ձրի է: Թուեմ այն մուզէները, ուր ամեն ոք կարող է և ամեն ժամ կարելի է գնալ: Բնական պատմութեան մուզէն, բաթ, հնագիտական, պատմական, Արիանա և այլն: Կարող էք մտնել աստեղագիտական գիւնարանը, բուսաբանական պարտէզները, մի խօսքով բոլոր այն հասարակական տեղերը, որոնց ոչ մէկի մուտքը փողով չէ և որոնց իրաքանչիւրի մէջ դուք կը գտնէք ձեզ համար հետաքրքիր նիւթեր ուսումնասիրելու:

Եւ եթէ այս բոլորը հերիք չէ, մի աչք ձգեցէք նոր հրատարակվող գրքերի կարկուտի վրա, լրագիրների հեղեղի և բրօշիւրների անձրևի վրա, դրանք անընդհատ տեղում են ու տեղում:

Մի ուրիշ անդամ ես կաշխատեմ այդ հրատարակութիւնների մասին աւելի մանրամասն գաղափար տալ, իսկ առ այժմ բաւականանում եմ մի քանի բաներով:

Ժընէվում հրատարակվում են բազմաթիւ թերթեր, որոնցից ամենագլխաւորներն են «Journal de Genève» և «Le Genevais». առաջինը պահպանողական և երկրորդը արմատական ուղղութիւններով, իսկ «La Tribune» թերթը հրատարակվում է օրական 5 անդամ և ունի այս տարի 15,808 բաժանորդ. մի նոյնքան էլ «Le Genevais» լրագիրն ունի, որ հրատարակվում է միայն օրը մի անդամ: Այժմ հայ ընթերցողը թող մի համեմատութիւն անի Ժընէվի կանտօնի բազմաթիւ թերթերից մէկը, որ 15,808 բաժանորդ ունի և մեր միակ թերթ «Մշակը», որը դեռ 2000 բաժանորդ էլ չունեցաւ: Ի հարկէ, դա տարօրինակ չէ, երբ Շվէյցարիայում 100-ից միայն մէկ տոկոսը կարդալ գրել չը գիտէ, մինչդեռ մեզանում եթէ 100-ից 20 տոկոս կարդալ-գրել գիտցող լինի, մեծ թիւ է համարվում, իսկ Թիւրքահայաստանում միայն 7% ունենք կարդալ-գրել գիտցող. անցեալ օր պրօֆէսօրներից մէկը ասում էր «որքան ընկած պիտի լինի մի ազգ, որքան յետամնաց, եթէ նրա կարդալ-գրել գիտցողների թիւը 60% է կազմում».... միամիտ պրօֆէսօրը, հայերի 7%-ից խաբար չունէր.... որքան կարմրեցի ես, երբ լսեցի պրօֆէսօրի այդ խօսքերը....

Ցեմնում եմ որ նամակս շատ երկարեց, ուստի և վերջացնելով այս անդամ, կաշխատեմ միւս անդամ փոքր ինչ աւելի կանգ առնել այս նիւթի վրա:

Բերնում դաշնակցական ժողով է գումարվում մաքսային տակսայի համար, դրա պատճառաւ էլ պրօֆ. Ֆավօն, որը Ժընէվի կանտօնի ներկայացուցիչն է, 15 օրով ընդհատեց դասերը և գնաց Բերն:

Արդիւնքի մասին եկող անդամ:

Ժընէվ. Վ. Փ.

«Кастій» լրագրում կարդում ենք հետևեալ տարօրինակ լուրը. «3-ը քաղաքամասի պրիստաւը հաղորդեց Բագուի ոստիկանապետին, որ բժիշկ Գալպէրին, իր հետ միասին գնալով հիւանդացած Մարիա Միկօվայի մօտ, որը տանջվում էր փորլուծութիւնից և որի մարմնի անդամները կծկվում էին, տեսնելով այդ տեսարանը, բժիշկը մի խօսք անգամ չարտասանելով, շտապեց գնալ իր տուն:»

—

Մազուտի գինը Բագուում սաստիկ թանգացել է, որովհետև խօլերայի պատճառով այժմ փողոցները մազուտով են ջրում: Մազուտի մի տակառը, որպէս հաղորդում է «Кастій» լրագիրը, արժէ 1 ր. 20 կոպէկ:

—

«Нов. Время» լրագրի խօսքերով, նորերս ներքին գործերի մինիստրութիւնը հրատարակել է մի հրաման, որի հիման վրա մահմետական հոգևորականութիւնը պարտաւոր է գիտենալ ռուսաց լեզուն:

—

Կովկասեան բժշկական վարչութեան կարգադրութեամբ, Թիֆլիսի ֆելդշէրների դպրոցում աւարտածներից 12 հոգի ուղարկվում են Բագու:

—

Խօլերա տարածվելու առաջն առնելու նպատակով, երկաթուղային վարչութեան կարգադրութեամբ, Բագուից Թիֆլիս երթևեկող պօստային և մարդատար գնացքները կրկնակի պակաս արագութիւն կունենան, այնպէս որ սրանից յետոյ գնացքները Բագուից Թիֆլիս կը հասնեն երկու օրվայ ընթացքում: Այդ ժամանակամիջոցում աւելի հեշտ կը լինի որոշել հիւանդների ներկայութիւնը և անջատել նրանց առողջներից:

—

Յունիսի 12-ին Թիֆլիսի առաջին գիմնազիայում վերջացան քննութիւնները: Հաստատութեան վկայական ստացան 41 հոգի, որոնցից երկուսը՝ Եվգենի Մարկով և Բիպինսկիյ Սերգէյ արժանացան ոսկէ մեդալի, իսկ Սանիչէվսկիյ Իվան ստացան արծաթէ մէդալ: Աւարտողները ազգութեամբ հետևեալ կերպով են բաժանվում. ռուսներ 10, հայեր 17, վրացիք 6, թուրքեր 2, գերմանացիք 2, լեհացիք 2, ֆրանսիացի 1 և հրէայ մէկ:

—

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՅ հետևեալը. «Խօլերայի երկիւղը այստեղ էլ է տարածվում: Խօլերայի դէմ նախապատրաստական միջոցների համար արդէն ուղարկված է Գանձակից բժշկապետ Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցին): Քաղաքը վերին աստիճանի կեղտոտ դրութեան մէջ է գտնվում, մանաւանդ Թուրքերի թաղը, որտեղ անմաքրութիւնը աննկարագրելի է: Շուտով ձեռք կառնվեն սանիտարական խիստ միջոցներ: Քաղաքին ջուր մատակարարող աղբիւրը մտադրութիւն կայ փակելու, որովհետև այդ աղբիւրի ջուրը ֆեսասակար ջուր է, քանի որ քաղաքում անցնում է զանազան կեղտոտութիւնների միջով: Բայց աղբիւրի խողովակից, որ անցնում է քաղաքի պատի մօտով, թոյլ պէտք է տրվի ջուր վերցնելու, որովհետև ջուրը մինչև այդտեղ մաքուր է գալիս: Բագուից, Անդրկասպեան երկրից և այլ տեղերից անագին ժողովուրդ է թափվում Շուշի, ուր ամառը զով է լինում:»

—

ՕԹԱՐՇԷՆ գիւղից մեզ հաղորդում են, որ ամսիս 11-ին, կէսօրին այդ գիւղը շրջապատող ամբողջ երկրի մէջ ընկուզաչափ կարկուտ եկաւ և կատարելապէս ոչնչացրեց Ուրբնիա, Ախաղբա, Թէղօթմինդա գիւղերի ցանքերը: Կարկուտից յետոյ եկաւ կարկտախառն յորդ անձրև և ահագին հեղեղ գոյացրեց: Սկրա կայարանի մօտ գտնվող օսաբնակ Ղվլէվի գիւղում հեղեղը ոչնչացրեց ամէն բան և երկու փոքրիկ երեխաներին խեղդեց տարաւ: Օթարշէնը մի տեսակ հրաշքով ազատվեց աղետից: Ամբողջ այդ շրջանի գիւղերի բնակիչները յուսահատութեան մէջ են:

—

Բժշկապետ Խատամանեանց նշանակված է Թիֆլիսի քաղաքագլխի կարգադրութեամբ դվխաւոր վերահսկող բժիշկ Թիֆլիսի բոլոր սանիտարական խմբերի բժշկական մասի վրա:

—

Թիֆլիսի 11-որդ պօլիցիական բաժնի սանիտարական խմբի մէջ, որի նախագահն է պ. Նիկոլաձէ, բժիշկ նշանակված է երիտասարդ, նորաւարտ բժիշկ պ. Բօտինեանց:

—

Յունիսի 12-ին կայացաւ յունվարի 6-ի աղետից վնասվածներին օգնող քաղաքային յանձնաժողովի վերջին նիստը: Ընդամենը, յօգուտ վնասվածների հաւաքված էր 16,578 ռուբլի, որոնցից 13,790 ռուբլի բաժանված է վնասվածներին թէ թոշակի ձևով և թէ միանուագ, իսկ 1982 ռուբլի մեռածների թաղման ծախս է տրված: Ցանձնված է քաղաքային վարչութեանը մնացորդ աննշան գումարը:

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է որ Թիֆլիսի առաջին բաժնի սանիտարական խմբի բժիշկ Աղամալօվի քաղաքից բացակայութեան պատճառով նրա փոխարէն քաղաքագլխի կարգադրութեամբ նշանակված է բժիշկ Կասումով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, մայիսի 24-ին

Քրիստոսի համբարձումից մի քանի օր առաջ, վանահայրը Հօվատար գիւղի եկեղեցու սուրբ օծման հանդէսը կատարելուց յետոյ վերադառնում է Դէրիկ, ուր գնացինք և մենք համբարձման տօնը տօնելու և Դէրիկի կենսարար ջրերում լողանալու. ջերմ ցանկութեամբ: Սալմաստեցիք տեսնելով որ Դէրիկում վեց եօթ երիտասարդներ կան, շտապեցին օգտվել հանդամանքից և գնալ Տիւլմէնի սարերը բողիկ հաւաքելու: Շաբաթ օր, մայիսի 16-ին, նրանք գնացին ձորերը և առաւօտեան ժամը տասին, երբ մենք զբաղված էինք արտերի առուներ հանելով, հասնում է հ ա վ ա ր թէ քաղաքացիներին, որոնք թւով 7—8 հոգի էին, թալանեցին: Մենք իսկոյն ձիաւորվում ենք և առնելով հետերնիս ով ինչ զէնք ունի, հասնում ենք հավարի. սակայն տեղի հեռաւորութեան պատճառով ի դերև անցաւ մեր բոլոր չարչարանքը, թէև ուղիղ եօթ ժամ 6—7 հոգի քրքրեցինք բոլոր ձորերը: Բայց կողոպտողները աւելի լաւ ծանօթ լինելով Դիւշմէնի իւրաքանչիւր քարին, խոյս տուեցին մեզանից: Այս անաջողութիւնը չափազանց զրդռեց Մովսէս Միքայէլեանցի պատուասիրութիւնը և վճռեց հէնց միւս օրը կողոպտվածներին ուղարկել Դիւշմէնը և ինքն հրացան առած գաղտնի հետևեց նրանց:

Այդ օրը, չը նայելով կիրակի լինելուն, մենք աշխատում էինք նոյն առուների վրա, երբ վազելով եկաւ քիւրդ ծառաներից մէկը և յայտնեց, որ Մովսէսը ձորում կանգնեցրել է աւազակներին մեծ թալանով և իրան ուղարկել են մեզ իմաց տալու, որ օգնութեան հասնենք: Անմիջապէս հեծնելով ձիերը սանձարձակ դիմում ենք այն տեղը, ուր սպասում էր մեզ վշտալի տեսարանը: Այդ օրը մենք երեք հոգի էինք, որովհետև միւսները գնացել էին Սալմաստ զանազան գործերով: Հաղիւ հասել էինք Դիւշմէնի «Ղուրդ-դէրէ» կոչված ձորի բերանը, որ հովտի խոտերի միջից բարձրացաւ մի արիւնաշաղախ գլուխ և կրկին ընկաւ: Ահա ինչ էր պատահել:

Մովսէս Միքայէլեան նկատելով ձորի մէջ 7—8 հոգի աւազակներ, որոնք հանդստանում էին ձորի մէջ և իրանց ասարը, վեց գլուխ տաւար, արածում էին այն տեղը, անմիջապէս վճռում է խլել տաւարը և եթէ հնար է բռնել նրանց: Չը նայելով իր հետ եղած քիւրդ ծառայի և բողիկ քաղող անչէն գիւղացիների աղերսանաց, որով կը խնդրէին չը դիպչել նրանց կամ գոնէ նախապէս տեղեկացնելով վանքին օգնութիւն ստանալ, Միքայէլեան զայրանալով գոչում է՝ «Ուրեմն ես վախենում եմ» և հրացանի մի հարուածով չփոթում է աւազակների խումբը, որոնք անմիջապէս թողնելով ասարը՝ դիմում են քարերի տակ պաշտպանվելու: Սկսում է տեղալ կապարէ կարկուտը երկու կողմից, մինչդեռ Միքայէլեանի հետ եղած քիւրդը, որն ամենևին չէ մասնակցում այդ կռիւին իր հաւատակիցների դէմ, ուղարկում է գաղտնի կերպով մի քիւրդ վանքը իմաց տալու: Բայց աւազակները վախենալով, որ հրացանների պայթիւնը կարող է հասնել վանքը և այնտեղից օգնութիւն գալ, իրենցից մի քանիսը զգուշութեամբ քշում են տաւարները, իսկ միւսները մի և նոյն ժամանակ պաշտպանվելով նահանջում են: Միքայէլեան տեսնելով որ աւազակները պիտի խոյս տան, զայրութը խեղդում է խոհեմութեան ձայնը և չը նայելով թշնամու բազմութեանը և իր հրացանի անպիտանութեան, որի ապացոյցը մի քանի անգամ ունենում է վերը հրացանաձգութեան ժամանակ, մին միայնակ ընկնում է փախստականների ետևից և երբ իջնում է հովիտը՝ տեսնում է իրան շրջապատված 14 զինեալ աւազակներով: Այստեղ սկսվում է յուսահատ կռիւը. հրացանի մէկ հարուածով գլորում է աւազակներից մէկին, որոնք դեռ չէին համարձակվում մօտենալ, բայց հրացանը դադարում է գործելուց և Միքայէլեան ստիպված է լինում ատրճանակի օգնութեան դիմել, որով գլորում է աւազակներից և մէկին և մնալով բոլորովին անզէն, վիրաւորվում է գնդակի երկու հարուածով, որ կուրծքից անցնելով՝ ջախջախել էր ողնաշարը: Սակայն և այդ ժամանակ այդ հերոսը հրացանի դաստակով սկսում է պաշտպանվել, մինչև որ էլի մի քանի մահացու վէրքեր ստանալով՝ ընկնում է հերոսաբար, պաշտպանելով այն մենաստանի շահն ու պատիւը, որին նուիրվել էր ամբողջովին:

Այսքանը միայն կարող ենք ասել այս դէպքի մասին, ինչպէս ստուգեցինք և կարողացանք տեղեկանալ նոյն իսկ իրանից: Աւազակները առնելով նրա հրացանը և ատրճանակը շտապում են հեռանալ, տանելով իրանց հետ երկու դիակներ: Երբ մենք հասանք եղերական տեղը, խեղճ նահատակը փռված էր գետնին արիւնաշաղախ, վիրաւորված 26 տեղից, որոնցից հինգը մահացու էին՝ երեքը կուրծքին գնդակի վէրքը և երկուսը՝ գլխին (ծոծրակը ջախջախված էր թուրով և ուղեղը դուրս կախված) և այս դրութեան մէջ նա բարձրանում էր թեների վրա և նայում էր մեր ճանապարհին: Խեղճը գիտէր որ իր ընկերները չէն թողնի իրան, բայց արդէն բանը բանից անցել էր:

Անհնար վիշտը, սարսափելի տեսարանը և վրէժխնդրութեան կատաղի ձայնը շփոթեց մեզ այնպէս, որ առաջին խօսքը եղաւ «գնանք»: Սակայն մահամերձ նահատակի ձայնը մեզ սթափեցրեց, որը լսելով մեր խորհուրդը, այն դրութեան մէջ իսկ չուզեց մեզ իզուր վտանգի ենթարկել. «Մի գնացէք, ինձ մի թողնէք, տարէք, հեծում էր խեղճը, 14 հոգին ամենքը այնալուներով են»: Այդ դրութեան մէջ Միքայէլեան չէր կորցրել ոչ իր առողջ դատողութիւնը և ոչ իր հոգու արիութիւնը: Մենք ձիով նրան հասցրինք վանքը, ուր ճանապարհի կէսին աւանդեց իր վշտալի հոգին Աստուծուն լուռ, խաղաղ և անտրտունջ: Զարկված բօպէից մինչև մահը երկու ժամից աւելի տևեց:

Երկուշաբթի, մայիսի 18-ին, յանձնեցինք այդ հերոսի դիակը հողին, մենաստանի գերեզմանոցում. պատարագին և թաղմանը ներկայ էին միայն իր մօտ ընկերները, մինչդեռ սալմաստեցիք մտածել անգամ չէին ուզում պատել հանգուցեալին իրանց ներկայութեամբ, թէև թաղումից յետոյ եկան երկու սաւրեցի և մէկ փայաջուկցի (Բաֆֆիի ազգականներից) զգայուն երիտասարդներ: Այս ցաւալի դէպքի մասին հեռագրեցինք անմիջապէս սրբազան առաջնորդին և տեղեկացրինք տեղական դատաւորներին, որոնցից մէկը, սարֆարազը, եկաւ ստուգելու դէպքը և ներկայ եղաւ թաղման: Այս բօպէիս վանահայրը ստացաւ սրբազան առաջնորդի յատուկ հրացանակրով ուղարկած գրութիւնը, որով սրբազան առաջնորդը քաջալերելով և յուսադրելով մեզ՝ պահանջում է մանրամասն տեղեկութիւններ այդ աղետի մասին՝ դատը վարելու համար: Ցայտնում է նաև, որ տեղեկացրած է ում և հարկն է գործը անհետևանք չը թողնելու համար: Մենք այդպէս էլ համոզված էինք, ըստ որում հեռագրեցինք և կրկին մեծ է մեր յոյսը և հաւատը դէպի մեր բարեխնամ առաջնորդը, որից լիովին կախված է այս գործի աջողութիւնը, քանի որ այս գործի մասին ս. առաջնորդի գործունէութիւնից մենք բաւական ծանրակշիռ փաստեր ունենք: Ուրեմն կը սպասենք և կը յուսանք, որ ս. առաջնորդը ճիգ և ջանք չի խնայի ապահովել իր սրբազան խնամոց յանձնված հօտը, և իր հաւատարիմ ծառայի արիւնը, որի մէջ շաղախված է մեր բոլորիս ձեռքերը, չի թոյլ տայ ջրով լուանալ:

Այս բոլորից յետոյ, սիրելի կարդացող, դիմում եմ դէպի քեզ, աղերսելով բարձի թողի չանել այս գրութիւնս և լուրջ ուշադրութիւն դարձնել այն կէտերի վրա, որոնք իւրաքանչիւր ճշմարիտ հայի սրտին պէտք է շատ մօտ լինեն: Եթէ այսպէս ընթանան գործերը՝ շուտով մեզ մէկ մէկ պիտի կոտորեն և այս մենաստանը, որտեղ ապաստան կարող է գտնել իւրաքանչիւր անտէր և դուրսը գտնվող մարդ, պաշտպանութիւն՝ անպաշտպանը և սէր ու քաջալերութիւն՝ յուսահատ հաւատացեալը. ահա այդ մենաստանը պիտի մատնվի վերջնականապէս կորստեան:

Ցոյս ունենք, որ մեր հայ եղբայրները չեն թողնի, որ գործը այս կէտին հասնի, և իւրաքանչիւրը թէ նիւթապէս և թէ աջակցութեամբ կօգնէ բարեկարգել այս դարեւոր նուիրական մենաստանը, ի պատիւ եկեղեցու և յօգուտ մեր հասարակութեան:

Ակնատես

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՄՈՍԿՎԱ, 12 յունիսի: Երէկ շատ պատուաւոր անձանց ներկայութեամբ բացվեց օղի քաշողների և սպիրտ արդիւնաբերողների համառուսական առաջին ժողովը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունիսի: «Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ Վոլգայի վրա խօլերայի մուտքը արգելելու համար այս օրերս ուղարկված է ջրային և ցամաքային հաղորդակցութեան դեպարտամենտի դիրեկտոր Ֆադէեվ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունիսի: Հրատարակված են այն կանոնները, որոնք տրված են Թիֆլիս ուղարկվող աւագ ինսպեկտորին թագաւորական երկաթուղիների վարչութեան բժշկի հետ միասին, որոնք պէտք է միջոցներ ձեռք առնեն խօլերայի դէմ՝ Անդրկովկասեան երկաթուղու վրա:—Երէկ ֆինանսների մինիստրը ուղևորվեց Ստոկհօլմ. նա կը վերադառնայ Պետերբուրգ յուլիսի 15-ին:

ԲՕԼՕՆԵԱ, 13 յունիսի: Այսօր առաւօտեան Մօնտէ-Սասսում տեղի ունեցաւ փլումն երկաթուղու գծի ուղղութեամբ, Բօլոնիայի և Ֆլորենցիայի մէջտեղը: Մի քանի տներ մնացին տակը. երկաթուղային և հեռագրական յարաբերութիւնները ընդհատված էն. սպանված են մինչև 34 հոգի. 10 վիրաւորվածներ դուրս են բերված հողի տակից:

ՎԻԼԴՊԱՐԿ, 13 յունիսի: Իտալական թագաւորական զոյգը երէկ ճանապարհ ընկաւ:

ՄԻՒՆԵԽԷՆ, 13 յունիսի: Իշխան Բիսմարկ իր ամուսնու հետ այսօր գիշերը հասան այստեղ և իջևանեցին Լէոբախ վիլլայում: Կայարանից մինչև վիլլա շարքով կանգնել էին ջահերը ձեռքերին ուսանողները, գիմնազիական և հրեհաշէջ ընկերութիւնները. արտիստական ընկերութիւնը ողջունեց իշխանական զոյգին փողհարութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի: «Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ Կասպից ծովից նաւերի միջոցով խօլերա տարածելու առաջն առնելու նպատակով, յանձնարարութիւն ստացած՝ դեպարտամենտի դիրեկտոր Ֆադէեվ լիազօրութիւն ունի կարգադրութիւններ անել, որոնք պարտաւորիչ են բոլոր տեղական իշխանութիւնների և բնակիչների համար: Տեղական իշխանութիւնները և հիմնարկութիւնները պէտք է յարմարեցնեն իրանց գործողութիւնները Ֆադէեվի կարգադրութիւնների հետ: Ֆադէեվին օգնական են տրվում նեղքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչները և բժշկական-սանիտարական հսկողութեան անդամները:—Թագաւորական ճանապարհների գլխաւոր տեսուչ Վէնդրիխ ուղարկված է արևելեան և հարաւ արևելեան ճանապարհները տեսնելու համար:—«Прав. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ արդէն փետրվարի 28-ին, երբ ստացվեց առաջին տեղեկութիւնը Հէրատում խօլերա երևալու մասին, սկսեցին միջոցներ ձեռք առնել խօլերայի Ռուսաստան մտնելն արգելելու համար: Այս օրերս հրատարակված միջոցները, որոնք պէտք է գործադրվեն այն տեղերում, որոնց խօլերա է սպառնում, գործադրվում են Աստրախանի, Սարատովի, Տավրիկեան նահանգներում, Ուրալեան շրջանում, Կովկասում և Զերնօմորեան նաւահանգիստներում: Գաղթականների գնալը դէպի Դամակեան շրջանը և Թուրքեստան՝ Աստրախանի Բագուի, և Օրենբուրգի վրայով, արգելված է. նոյնպէս և արգելված է անպատրաստ կաշու ներմուծումը պարսկական նաւահանգիստներից:—Անդրկասպեան երկաթուղու գծի վրա գտնվող Կախկա գիւղում, մայիսի 12-ից մինչև յունիսի 10-ը խօլերայով հիւանդացան տեղացիներից 43 հոգի, մեռան 41: Խօլերան երևաց Մերվից դէպի Ասխաբադ մօտ գտնվող բանակը գնացող բատարէայի մէջ. յունիսի 10-ից մեռան 4, ծանր հիւանդ են 9, լուծողութիւն ունեն 23 հոգի: Ասխաբադում ամբողջ ժամանակա-

միջոցում մեռան 2 երեխայ. Ուղում-Ադայում մայիսի 25—28 հիւանդացան և մեռան 3 պարսիկ։ Յունիսի 5-ից մինչև 12-ը խօլերայով հիւանդանալու դէպքեր պատահեցան Անդրկասպեան և Սամարկանդի շրջանների զօրքերի բնակութեան մի քանի տեղերում։ Բագուում յունիսի 6-ից մինչև 12-ը հիւանդացան 164. մեռան 70. առողջացան 12. խօլերայով հիւանդանալու փոքրաթիւ դէպքեր եղան Բագուի շրջակայքում, հիւանդութեան տևողութիւնը 12 ժամից մինչև 3։ Հիւանդացողները բոլոր ազգութիւններից են, գլխաւորապէս բանւոր դասակարգից. եկեղեցիներից յունիսի 7-ին մեռաւ՝ խօլերայի նշաններով կոնդուկտորը՝ Բուխարայի կայարանում։ Ապա մինչև յունիսի 11-ը խօլերայի տեղական հիւանդանալու դէպք չէ եղել։—Յունիսի 6-ից մինչև 12-ը առանձին մասնաժողով ստացել է 18,762 ռուբլի, ի մէջի այլոց 3,916 ռուբլի Եգիպտոսում ապրող ռուսահպատակներից։

ՊԱՐԻԶ, 14 յունիսի։ Մարկիզ Դէ-Մորէս, որը մենամարտի ժամանակ սպանեց հրէայ Մէյերին, կալանաւորված է և ուղարկված բանտը։—Բավաչոլ վճռաբեկ բողոք տուեց մնոքրիզօնեան դատարանի դէմ։

ՊԱՐԻԶ, 14 յունիսի։ Միացեալ Նահանգների զինուորական գործակալ Բօրուպ ձեռք բերեց ծովային մինիստրութեան մի պաշտօնեայից դոկումէնտներ, որոնք պետական գաղտնիք էին պարունակում։ Պաշտօնեան կալանաւորված է։ Բօրուպին առաջարկված է հեռանալ Պարիզից։ Բօրուպ հերքում է այն տեղեկութիւնը, որ իբր թէ ծովային մինիստրութեան պաշտօնեայից ձեռք բերած դոկումէնտները նա ուղարկել է գերմանական և իտալական կառավարութիւններին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունիսի 12-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արժէ . .	95 ր.	40 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	48 ր.	75 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	39 »	40 »
Ոսկի — — արժէ . .	7 »	97 »
Մաքսայի կուպօններ — . .	160 »	— »
Արծաթ — — — . .	1 »	10 »
Բօրսային դիսկօնտեր — . .	4 »	$5^1/_2$ »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . .	104 »	— »
— — — — 2-րդ — . .	103 »	25 »
— — — — 3-րդ —	— »	— »
— — — — 4-րդ —	— »	— »
— — — — 5-րդ —	— »	— »
— — — — 6-րդ —	102 »	75 »
6% ոսկեայ րէնտա	161 »	— »
4% ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	102 »	75 »
— — — 3-րդ —	105 »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	241 »	50 »
— — երկրորդ —	220 »	50 »
Պետական երկաթուղային րէնտա.	104 »	50 »
$5^1/_2$ րէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	94 »	75 »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	102 »	50 »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. — — .	193 »	50 »
$5^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի.	105 »	— »
$4^1/_2$% դրական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մեռալ. .	153 »	25 »
— — — թղթադ. .	102 »	37 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	102 »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	50 »
Օդէսայի — — .	101 »	75 »
Թիֆլիսի — — .	98 »	50 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	102 »	50 »
— — Քութայիսի — .	102 »	50 »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՍՖԱԼՏԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԱՍՖԱԼՏԻ ՈՒ ԳՈՒՏՐՕՆԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Սիզրանի ասֆալտի գործարանի Բարձրագոյն հաստատված ընկերութեան ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԹՈՒՄՈՒՄ։ Յանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով.

ԹԻՖԼԻՍ. Ալէքսանդրեան փողոց, № 50, Ի. Մ. Չերնեաեվին։

ԲԱԹՈՒՄ. Սադովայա փողոց, № 3, պ. Սուխանովին։

№ 24 11—15

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 12 ժամից մինչև 2 ժ. և երեկոյեան 5 ժամից մինչև 7 ժ. Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։

(№ 145) 60—150

ՇԵՐԻՆԳԻ ՊԼՊՍԻՆ ԷՍՍԷՆՑԻԱ

Դոկտոր Օսկար Լիբրէյխի՝ Բերլինի համալսարանի ֆարմակոլոգիայի պրոֆէսորի ըստ էպտով։

SCHERINGS

Grune—Apotheke Berlin N. Shaussee—Strasse 19

Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային մեծ խանութներում։ Միակ պահեստը Կովկասի համար՝ Կովկասեան ընկերութեան դեղատան ապրանքների վաճառման՝ ԹԻՖԼԻՍՈՒՄ, և բաժանմունքը ԲԱԳԻՈՒՄ։

(№ 53) 9—10

ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԿՕՋՈՐ տանող ճանապարհի վրա կորցրած է մի ֆրանսիերէն գիրք, մէջ դրված նամակով։ Գտնողին վարձատրութիւն կը տրվի։ Դիմել պ. Մ. Մուրատաղին, Թիֆլիսում, Լաբօրատօրնայա փողոց, Ծուրինովի տուն, № 5, բակում։

(№ 64) 3—3

МУЗЫКАЛЬНЫЙ МАГАЗИНЪ въ Тифлисѣ

И В. А. СУЗАНАДЖЯНЪ.

ՆՕՏԱՅԻՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Յ. ՍՈՒԶԱՆԱՃԵԱՆԻ

Մատակարար (поставщикъ) Թիֆլիսի բաժնի Ռուսաց Արքունական Կօնսերվատորիայի.

Վաճառվում են Կովկասեան եղանակներից.

Կորդանեանի. Նոր բայաթի. Nouveau Bayati.

» Հայկական բապսոդիա, Rhapsodie Arménienne.

Տիգրանեանի. Կովկասեան եղանակներ և պարեր. Frans Kaucasische.

Ա.Ֆրիկեանի. Մայր Արաքսի. Պարոնբէկեանի՝ Հազար երանի.

Տէր-Յովսէփեանի՝ Մանկական երգարան (նօտաներով).

Հայկական Մարշ. Marche Arménienne.

Ցիծեռնակ (Նոր փոխադրութիւն) Цицернакъ.

Նոյնպէս և մեծ քանակութեամբ ամեն տեսակ նօտաների, պիանօի, ջութակի, ֆլէյտի և այլ գործիքների համար։ Բօեալներ, պիանօներ, Շրէդերի և ուրիշ ֆաբրիկանների, կան ծախու և վարձով տալու՝ ջութակներ, ֆլէյտաներ, ֆիսհարմօնիաներ, ջութակի լարեր և այլն.... Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են իսկոյն։

Դիմել հետևեալ հասցէով. г. Тифлисъ, Музыкальный магазинъ Ив. Сузанаджянъ.

№ 53. 8—10

ԷՎԷԼԻՆԱ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վէպ (Հոդերձանական էտիւդ).

Գինը 50 կոպէկ (պօստի ծախսով)

Ծախվում է. „Մշակի“ խմբագրատանը, Կենտրօնական և Խիդէկելի գրավաճառանոցներում և Միքայէլեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսօվի գրավաճառանոցում.

(№ 126) 2—20

ՄԻԶՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ

„Ольфакторіумъ Нудилинъ“ М. Л. ЖИРМУНСКАГО.

բժշկական դէպարտամէնտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագոլ ծական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում։

№ 12 33—40

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԽՐԻՄԵԱՆ

կենսագրական տեսութիւն (պատկերով)

Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ

Գտնել կարելի է գրավաճառանոցներում։ Գինն է 40 կ.։ Օտար քաղաքներից դիմել հեղինակին, „Մշակի“ խմբագրատուն։

(№ 45) 1—5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մորթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցօվի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. հիւանդանոցի տակ։

(№ 67) 1—100 (է. շ.)

Երկու բնակարաններ են հարկաւոր Խարփուխի և Կուկիայի քաղաքային տարրական դպրոցների համար, մէկը 6-դ քաղաքամասում, միւսը 9-դ կամ 10-դ քաղաքամասերում։ Իւրաքանչիւր բնակարանը պէտք է բաղկացած լինի հինգ լոյս սենեակներից, որոնցից երեքը պէտք է լինեն մեծ, ունենան խոհանոց, ամբարանոց և ընդարձակ բակ։ Յանկալի կը լիներ տունը առանձնացած ունենալ։ Ցանտերերի յայտարարութիւնները ընդունվում են քաղաքային վաճառութեան մէջ մինչև այս տարվայ յուլիսի 1-ը։

2—3

ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ոյժի հասցնելը տարածութեան վրա.

ՏԵԼԵՖՕՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.

Էլէկտրական նշաններ.

ԶԱՆԳԱԿՆԵՐ

ԳԱԼՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.

Էլէկտրօլիզ,

Ակումուլատորներ, Էլէմենտներ,

ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.

Նախահաշիւներ և ծրագիրներ ձրիաբար.

(91—№ 5)

ԷԼԷԿՏՐՕՆ

ԳԼԷԲՕՎ եղբայրների

ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա)

Մեծ Սադովայա փողոց, 24

РОСТОВЪ (на Дону)

БР. ГЛѢБОБЫ

Большая Садовая, 24.

ԳԱԶԱՑԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Օտտօ սիստեմայի, որոնք իրանք իրանց են ուղղում ու օծում։

Գազի համար — ածուխից,

— — — նաֆթից,

— — — անտրացիտից,

— — — կէրօսինից

1/2-ից մինչև 120 ձիու ոյժ։

Շոգեմեքենաներ մեծ արագութեան.

70—100 (է. շ.)

ՏՈՒԱԼԷՏԻ ՄԻԶՈՑ ՏԻԿԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БЕРЕЗОВЫЙ БАЛЬЗАМЪ Д-РА ЛЕНГИЛЯ ВЪ ВѢНѢ.

Առնել կարելի է Ռուսաստանի բոլոր պարֆիւմերական և դեղագործական մագազիններում և մի քանի դեղատներում։

Գործ է ածվում երեսի մորթը և ձեռքերը լուանալու համար.

ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՄԻԶՈՑ

Այդ բալզամի պատրաստութեան ժամանակ գլխաւորապէս ուշադրութիւն է դարձրած, որ նրա բաղադրութեան մէջ մտնեն բացառապէս նիւթեր, որոնք չեն փչացնում մորթին։ ԳԻՆԸ սրուակի՝ 1 ր. 65 կոպ., Բէնզոյեան սապօն 35 և 50 կ. կտորը, Օպօ-պօմադ (կօլտ-կրեմից լաւ) 1 ր.

Դարսել և ուղարկել Եւրօպ. Ռուսաստան 70 կ., ասիական Ռուսաստան 1 ր. Գլխաւոր պահեստ ամբողջ Ռուսաստանի համար Վ. ԱՈՒՐԻԽԻ մօտ, Պետերբուրգում, Կօլօկօլնայա 18—19.

(91—№ 140) 7—7 (ամսի 15)

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Іюня 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.